ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- փետրվարի 2015 թվականի №--
քաղ. Երևան

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՀՐԱԶԴԱՆ-5» ԿԱՅԱՆԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը և 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընդունել ի գիտություն, որ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Հրազդան-5» կայանի 2015 թվականի ներդրումային ծրագիրը կկազմի 301,2 մլն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի, հետևյալ հիմնական ուղղություններով.
   1) «Հրազդան-5» կայանի հուսալիության և անվտանգության մակարդակի բարձրացում ու արդիականացում՝ 178,5 մլն դրամ,
   2) «Հրազդան-5» կայանի բնականոն և հուսալի շահագործման ապահովում՝ 122,7 մլն դրամ:
2. Համաձայնություն տալ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Հրազդան-5» կայանի 2015 թվականի ներդրումային ծրագրին՝ համաձայն №1 և №2 հավելվածների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
-- փետրվարի 2015թ.
ժամը --^{00}

Հավելված№1
Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2015 թվականի փետրվարի ---ի №---
որոշման

«Հրազդան-5» կայանի հուսալիության և անվտանգության մակարդակի բարձրացմանն ու արդիականացմանն ուղղված ներդրումների 2015 թվականի կանխատեսվող ծավալը

մլն դրամ՝ առանց ԱԱՀ

հ/հ	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթառուղղությունը	Չափի միավոր	Ներդրումների կանխատեսվող ծավալը	
			Քանակ	Ծավալ
1	2	3	4	5
1	Էլեկտրաքիմիական պաշտպանության կայանների վերականգնում և արդիականացում	կայան	2	11.5
2	Կայանի պահուստային էլեկտրասնուցման համակարգի ներդրում (500 կՎտ հզորության դիզելային շարժիչի ձեռքբերում և տեղակայում)	հատ	1	47.0
3	Կոմպրեսորային կայանքից հետո բնական գազի ջերմաստիճանի իջեցման միջոցառումների իրականացում (ջերմափոխանակիչ սարքի ձեռքբերում և տեղակայում)	հատ	1	85.0
4	Շոգետուրբինի կարգավորման և պաշտպանության համակարգերի վերազինում (էլեկտրական և հիդրավլիկ կերպափոխիչի արդիականացում)			35.0
	Ընդամենը			**178.5**

Հավելված№2
Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2015 թվականի փետրվարի ---ի №---
որոշման

«Հրազդան-5» կայանի բնականոն և հուսալի շահագործումն ապահովելուն ուղղված ներդրումների 2015 թվականի կանխատեսվող ծավալը

մլն դրամ՝ առանց ԱԱՀ

հ/հ	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթառուղղությունը	Չափի միավոր	Ներդրումների կանխատեսվող ծավալը	
			Քանակ	Ծավալ
1	2	3	4	5
1	**Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում**			**87.5**
1)	Էլեկտրական լաբորատորիայի չափիչ սարքերի ձեռքբերում	հատ	118	80.0
2)	«Թթվածնի կենսաբանական պահանջ-5»-ի որոշման սարքի ձեռքբերում	հատ	1	1.5
3)	Յուղի բռնկման ջերմաստիճանի որոշման սարքի ձեռքբերում և տեղակայում	հատ	1	6.0
2	**Հաստոցային պարկի ընդլայնում**			**9.2**
1)	Գայլիկոնային հաստոցի ձեռքբերում	հատ	2	1.5
2)	Խառատային հաստոցի ձեռքբերում (փոքր)	հատ	1	1.3
3)	Ֆրեզերային հաստոցի ձեռքբերում	հատ	1	5.0
4)	Արհեստանոցի դազգահների և գործասեղանների ձեռքբերում	հատ	9	1.4
3	**Մեքենա-մեխանիզմների ձեռքբերում**			**26.0**
1)	Ավտոաշտարակի ձեռքբերում	հատ	1	18.0
2)	Հերթապահ մեքենայի ձեռքբերում	հատ	1	8.0
	Ընդամենը			**122.7**